ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- ----------ի 2026 թվականի №- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի №520-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359-Ն, 2007 թվականի հունիսի 15-ի №275-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №520-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) №1 հավելվածի՝

1) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) Էներգիայի պահեստավորման ծառայության մատուցում՝ Էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող անձի կողմից,».

2) 3-րդ կետում «իսկ ՎԷԱ կայանների» բառերից հետո լրացնել « և ԵՊ կայանների» բառերը.

3) 4-րդ կետը՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին ենթակետով.

«7.1) ԵՊ կայան՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված Էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող պահեստավորող.».

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-ին և 15.2-րդ ենթակետերով.

«15.1) Էներգիայի պահեստավորում (Պահեստավորում)՝ Էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրված էլեկտրական էներգիայի վերջնական սպառման հետաձգում դրա արտադրման պահից ավելի ուշ պահի կամ արտադրված էլեկտրական էներգիայի վերափոխում էներգիայի այնպիսի ձևի, որը հնարավոր է կուտակել, այդ էներգիայի կուտակում և հետագայում այդ էներգիայի վերափոխում էլեկտրական էներգիայի կամ օգտագործում որպես այլ էներգակիր.

15.2) Էներգիայի պահեստավորման ծառայությունից օգտվելու երաշխիք (Էներգիայի պահեստավորման երաշխիք)՝ «Էներգետիկայի մասին» օրենքով, ինչպես նաև ՊՄԳ-ով սահմանված ժամկետներում և ծավալով էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձի մատուցած էներգիայի պահեստավորման ծառայության պարտադիր ձեռքբերման իրավունք, որը պաշտպանվում է «Էներգետիկայի մասին» օրենքով, Շուկայի կանոններով և պայմանագրերով: Սույն սահմանման իմաստով՝ լիցենզիա ունեցող անձի մատուցած էներգիայի պահեստավորման ծառայության ծավալ է համարվում էներգիայի այն առավելագույն քանակությունը, որը լիցենզիա ունեցող անձը, «Էներգետիկայի մասին» օրենքի համաձայն, պարտավոր է և տեխնիկապես ունակ է պահեստավորելու ու հետագայում առաքելու էլեկտրաէներգետիկական համակարգ՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ ժամանակահատվածում այդ կարողությունն օգտագործվել է մասնակիորեն, թե ամբողջությամբ, եթե պահեստավորման ծառայության չօգտագործումը պայմանավորված է Համակարգի օպերատորի կարգավարմամբ կամ Հաղորդման ցանցում կամ Բաշխման ցանցում առաջացած սահմանափակումներով.».

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 26.1-ին ենթակետով.

«26.1) Շուկայի կանոններ՝ Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոններ, որոնք կանոնակարգում են

էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների մասնակիցների առևտրային փոխհարաբերությունները, ինչպես նաև հաղորդման և բաշխման ցանցերի զարգացման պլանավորման, կառավարման, կարգավարման և այդ ցանցեր մուտքի ապահովման հետ կապված հարաբերությունները.».

4) 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 3.2-րդ ենթակետերով.

«3.1) ԵՊ կայանների վրա, որոնց Սակագները որոշվում են սույն մեթոդիկայի 14.1-ին գլխի համաձայն.

3.2) ՊՄԳ-ի շրջանակում գործող ԵՊ կայանների վրա, որոնց Սակագները որոշվում են ՊՄԳ-ի համաձայն,».

5) 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. Սույն բաժինը սահմանում է ԷՄՇ-ում վաճառվող էլեկտրական էներգիայի (հզորության) և մատուցվող ծառայությունների Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը Լիցենզավորված անձանց համար, բացառությամբ ՊԷԱ կայանների, ՊՄԳ ունեցող ՀԷԱ կայանների և ՊՄԳ շրջանակում գործող ԵՊ կայանների, որոնց Սակագները ձևավորվում են ՊՄԳ-ի համաձայն:».

6) 31-րդ և 34-րդ կետերում «ՎԷԱ կայանների» բառերից հետո լրացնել « և ԵՊ կայանների» բառերը.

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 14.1. ԵՊ ԿԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ

45.1. Սույն գլուխը սահմանում է ԵՊ կայանների կողմից Շուկայի կանոններին համապատասխան էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման Սակագնի հաշվարկման կարգը:

45.2. Սույն գլխի համաձայն՝ էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման Սակագինը հաշվարկվում և սահմանվում է հաշվարկային ժամկետի համար յուրաքանչյուր ԵՊ կայանի համար Սակագնի սահմանման վերաբերյալ Հանձնաժողովի առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից 15 տարվա ընթացքում: Ընդ որում, առաջին հաշվարկային ժամկետ համարվում է Սակագնի

սահմանման վերաբերյալ Հանձնաժողովի առաջին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող տասնմեկերորդ ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածը, երկրորդից մինչև տասնչորսերորդ հաշվարկային ժամկետը՝ նախորդ հաշվարկային ժամկետին հաջորդող ամսվա 1-ից սկսած 12-ամսյա ժամանակահատվածը և տասնհինգերորդ հաշվարկային ժամկետը՝ տասնչորսերորդ հաշվարկային ժամկետին հաջորդող ամսվա 1-ից սկսած մինչև Հանձնաժողովի առաջին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 տարին լրանալու օրն ընկած ժամանակահատվածը:

45.3. ԵՊ կայանի կառուցման ավարտից հետո Հանձնաժողովը Լիցենզավորված անձի հայտի հիման վրա հաշվարկային առաջին ժամկետի համար էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման Սակագինը սահմանում է Հանձնաժողովի կողմից էներգիայի պահեստավորման լիցենզիաների տրամադրման համար անցկացված մրցույթի արդյունքում ձևավորված Սակագնին հավասար կամ էներգիայի պահեստավորման լիցենզիան առանց մրցույթի տրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված Սակագնին հավասար:

45.4. Հաշվարկային երկրորդ ժամկետից սկսած Հանձնաժողովն էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման Սակագինը հաշվարկում և սահմանում է՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$\mathrm{T_{պ}} = \mathrm{T_{պ1}}\left(\mathrm{K_{պ1}} * \frac{\mathrm{CPI_{պ}}}{100} + \mathrm{K_{պ2}} * \frac{\mathrm{R_{պ1}}}{\mathrm{R_{պ2}}}\right),$$

որտեղ՝

1) ՏՊ-ն էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման հաջորդ հաշվարկային ժամկետի համար սահմանվող Սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ/ամիս).

2) ՏՊ1-ը էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման ընթացիկ հաշվարկային ժամկետի համար գործող Սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ/ամիս).

3) ԿՊ1-ը գործող Սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ սղաճի տեմպով պայմանավորված և ընդունվում է հավասար 0.2-ի.

4) CPIՊ-ն Հանձնաժողովի նիստին Սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող օրացուցային տարվա սպառողական գների ինդեքսն է դրան նախորդող նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունն իրականացնող իրավասու մարմնի կողմից.

5) KՊ2-ը գործող Սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0.8-ի.

6) RՊ1-ը Հանձնաժողովի նիստին Սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող տասներկու ամիսների (բացառությամբ այն ամիսների, որոնց ընթացքում Սակագին չի գործել) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքների միջին թվաբանական մեծությունն է.

7) RՊ2-ը էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման Սակագնի «TՊ1» մեծության հաշվարկում ներառված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքն է, բացառությամբ առաջին հաշվարկային ժամկետի համար սահմանված Սակագնի, որի դեպքում RՊ2-ն ընդունվում է էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման հաշվարկային առաջին ժամկետի Սակագնի ուժի մեջ մտնելու ամսվա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին փոխարժեքին հավասար.

45.5. էներգիայի պահեստավորման լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայանների կողմից մատուցվող էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման Սակագինը՝ էներգիայի պահեստավորմանը լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը Բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, Բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար

անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ Բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում՝ սահմանվում (վերանայվում) է սույն մեթոդիկայի 45.2-րդ կետի համաձայն ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար:».

8) N 1 հավելվածի 1-ին կետում «ՎԷԱ կայանների» բառերից հետո լրացնել « և Էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող կայանների» բառերը:

2. Որոշման N 2 հավելվածի՝

1) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ ենթակետերով.

«2.1) Էներգիայի պահեստավորում (Պահեստավորում)՝ էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրված էլեկտրական էներգիայի վերջնական սպառման հետաձգում դրա արտադրման պահից ավելի ուշ պահի կամ արտադրված էլեկտրական էներգիայի վերափոխում էներգիայի այնպիսի ձևի, որը հնարավոր է կուտակել, այդ էներգիայի կուտակում և հետագայում այդ էներգիայի վերափոխում էլեկտրական էներգիայի կամ օգտագործում որպես այլ էներգակիր.

2.2) Էներգիայի պահեստավորման ծառայությունից օգտվելու երաշխիք (Էներգիայի պահեստավորման երաշխիք)՝ «Էներգետիկայի մասին» օրենքով, ինչպես նաև ՊՄԳ-ով սահմանված ժամկետներում և ծավալով էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձի մատուցած էներգիայի պահեստավորման ծառայության պարտադիր ձեռքբերման իրավունք, որը պաշտպանվում է «Էներգետիկայի մասին» օրենքով, Շուկայի կանոններով և պայմանագրերով: Սույն սահմանման իմաստով՝ լիցենզիա ունեցող անձի մատուցած էներգիայի պահեստավորման ծառայության ծավալ է համարվում էներգիայի այն առավելագույն քանակությունը, որը լիցենզիա ունեցող անձը, «Էներգետիկայի մասին» օրենքի համաձայն, պարտավոր է և տեխնիկապես ունակ է պահեստավորելու ու հետագայում առաքելու էլեկտրաէներգետիկական համակարգ՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ ժամանակահատվածում այդ կարողությունն օգտագործվել է մասնակիորեն, թե ամբողջությամբ, եթե պահեստավորման ծառայության չօգտագործումը պայմանավորված է Համակարգի օպերատորի կարգավարմամբ կամ Հաղորդման ցանցում կամ Բաշխման ցանցում առաջացած սահմանափակումներով.».

2) 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) Էներգիայի պահեստավորման ծառայության մատուցում՝ Էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող անձի կողմից,».

3) 9-րդ կետում «գործող կայանների» բառերից հետո լրացնել « և պահեստավորող կայանների» բառերը.

4) 14-րդ կետում «գործող կայանների» բառերից հետո լրացնել « և Էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող կայանների» բառերով.

5) 22-րդ կետում «80 աշխատանքային օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել « (Էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում)» բառերը.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ----------ի 2026թ.